Դավիթ Անհաղթ

Չորս հարյուր իննսունինը թվականի գարնանային մի տաք երեկո Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի բացօթյա դահլիճներից մեկը լեցուն էր բազմությամբ: Բեմի վրա փափուկ բազմոցներ էին, որոնց մեջ նստած էին պատկառելի տարիքի մի քանի այրեր: Դրանք մեծանուն փիլիսոփաներ էին, գիտնականներ ու պատմիչներ, որոնք հավաքվել էին, որպեսզի ղեկավարեն աշխարհի տարբեր կողմերից ժամանած վաթսուն իմաստասերների մրցույթը: Վերջիններիս մեջ էր նաև մի հայ երիտասարդ իմաստասեր՝ Դավիթ անունով:

Դահլիճը լարված հետաքրքրությամբ հետևում էր, թե ինչ հարցեր կտրվեն, և ինչպես կպատասխանեն իմաստասերները: Դա ոչ միայն խելքի, իմացության, գիտելիքների, այլև ճկուն մտածողության մրցույթ էր: Բոլորը լարված սպասում էին, թե ով պիտի դառնա օրվա հերոսը, ով պիտի շահի հաղթանակի դափնին:

Ահա հրապարակ դուրս եկավ հայ փիլիսոփա Դավիթը: Մեծահամբավ իմաստասեր Օլիմպադորասը հետաքրքրությամբ նայեց նրան, ապա ծանրումեծ հարցրեց.

-Երիտասա՛րդ, ի՞նչն է աշխարհում հավերժական:

-Ժամանակը,- անվարան պատասխանեց Դավիթը,- այն անտեսանելի է, անշոշափելի, անսկիզբ, անվերջ ու անվախճան:

-Կա՞ տիեզերքում որևէ բան, որ հավերժական ընթացքի մեջ է և երբեք կանգ չի առնում:

-Կա: Դարձյալ ժամանակը: Այն հոսում է անդադար և անկախ որևէ մեկի ցանկությունից: Միակ բանն է ողջ տիեզերքում, որին ո՛չ կանգնեցնելու, ո՛չ սանձելու ի զորու չենք:

Եվ կրկին հարց առաջադրեցին Դավիթին.

-Ո՞րն է երկարակեցության գաղտնիքը:

-Քչակերությունը, սակավապետությունը: Ոչ թե պետք է ապրել ուտելու, այլ պետք է ուտել ապրելու համար:

-Այն ո՞ր առաքինությունն է, որ մարդուն մոտեցնում է Աստծուն:

-Աստծու նման սիրել աշխարհն ու մարդկանց, կյանքում առաջնորդվել Աստվածաշնչի ոսկե օրենքով, որում ասվում է. «Ինչ կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ համար, նույնն էլ դուք արեք նրանց համար»:

-Անսահմանության մեջ ի՞նչն է ամենից արագ թռչում:

-Միտքը: Այն վայրկենապես կարող է կտրել հեռավոր աշխարհներ, թափանցել օվկիանոսների հատակը, կարող է սլանալ դարերի խորքը, հասնել բիբլիական ժամանակները, հաղորդակցվել նախամարդուն, Ադամին ու Եվային, Հիսուս Քրիստոսին:

-Ո՞վ է ամենաիմաստունը բոլոր ժամանակների համար:

-Բնությունը, որ մայրն է ամենայն գեղեցիկի, բարու ու չարի: Նա գիտի ամեն ինչ իր տեղում և ժամանակին անել: Բնությունն անսխալական է:

Հարցերն ավարտվեցին: Մի պահ տևած լռությանը հաջորդեցին բուռն ծափահարություններ: Ունկնդիրները հոտնկայս վանկարկում էին.

-Դավիթն անհաղթ է:

Օլիմպադորաս փիլիսոփան բարձրացրեց աջը՝ ի նշան լռության:

-Մենք որոշեցինք,- խոսեց նա,- հաղթանակի դափնին շնորհել հայ փիլիսոփա Դավիթին:

Երկու օր անց ծեր իմաստասերը ճանապարհում էր Դավիթին: Նա համբուրեց երիտասարդի ճակատն ու ասաց.

-Որդի՛ս, քարոտ է լինելու ճանապարհդ: Խավարամիտ մարդիկ չեն սիրելու առաջադեմ մտքերդ: Իմացի՛ր՝ շատերի նախանձն ես շարժելու, իսկ նախանձը միշտ չար է: Պիտի դիմանաս, ճակատամարտես: Բարին քեզ հետ: Գնա՛ և լո՛ւյս սփռիր քո հեռավոր հայրենիքում:

Դավիթ Անհաղթը սփռեց այդ լույսը՝ իր իմաստուն մտքերը մագաղաթներին հանձնելով և սերունդներին թողնելով փիլիսոփայական լրջագույն աշխատություններ:

Նրա ճանապարհը, սակայն, ոչ միշտ հարթ եղավ, ինչպես մարգարեաբար կանխատեսել էր մեծանուն Օլիմպադորասը: Հասկացվելու և գնահատվելու համար շուրջ մեկ դար անհրաժեշտ եղավ:

Երկրային կյանքին հրաժեշտ տալուց հարյուր տարի անց Դավիթ Անհաղթին եկեղեցին աշխարհական սուրբ հռչակեց: